



ԳԻՏԵՐՍ ԹԵ...

Երբ ոսպնեակը սուազ առաձգական դառնայ, այլևս չի կրնար յստակ նկար մը կազմել ցանցենիին վրայ: Կարճատեսները միայն մօտեն յստակ կը տեսնեն, իսկ հեռատեսները՝ միայն հեռուն: Այս թերութիւնները կը սրբագրուին ակնոցներու կամ ալ կաչուն ոսպնեակներու միջոցաւ:

ԼՍԵԼԻՔ

ՄԵՐ ՀԱՄԱՍԱՐԱԿՇՈՒԹԻՒՆԸ

Խիտունջը եւ իր երեք անցքերը կը պարունակեն հեղուկ մը, որ կ'երերայ մեր ամենադոյզն շարժումներէն: Ձիղերը կը յայտնաբերեն հեղուկին դիրքը խողովակին մէջ եւ նշաններ կը դրկեն ուղեղին, որ շուտով կը գիտակցի, եթէ իյնալու վրայ ենք: Եթէ պարողի պէս մեր մարմնին առանցքին շուրջ արագ կերպով դառնանք, անցքերու հեղուկին սուրբ հաւասարակշռութիւնը կը խախտի եւ մենք գլխու պտոյտ կը զգանք:

ԳԻՏԵՐՍ ԹԵ...


- Կրնանք յիշել որոշ ձայներ, մասնաւորապէս մարդկային ձայնը:
- Մենք խօսող անձը իր ձայնէն կրնանք ճանչնալ:
- Մանուկ մը շուտով կը ճանչնայ իր մօր ձայնը:

ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐ

Ունինք հինգ զգայարանքներ, որոնք մեզի տեղեկութիւններ կը հայթայթեն մեր շրջապատին մասին՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք եւ շօշափելիք:

ՏԵՍԱՆԵԼԻՔ

Տեսանելիքը զգայարանք մըն է, որ մեզի կարելի կը դարձնէ տեսնել մեր շրջապատը: Մեր աչքերը հաստատուած են ոսկրային խոռոչներու մէջ, որոնք կը կոչուին ակնախորշ: Վեց մկաններ աչքը կրնան դարձնել ամեն ուղղութեամբ եւ այսպիսով կարելի կ'ըլլայ նայիլ դեպի վեր, վար եւ կողմնակի:



ԹԻՒՆ ԴԱՏՐՈՍՏԵՅՑ՝ ՄԱՐԿՈՒՆԻ ԱՇԽԱՏԱՆՑՆԵՐ, ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆ

ԳՈՂՅՈՒԱԾ ԲՈՅՐԸ

Ժամանակին, Բերուի Լիմա քաղաքին մեջ փռապան մը կ'ապրեր: Ան այնքան գարշելի էր, որ նոյնիսկ հինգած հացերուն փշրանքները չէր տար թռչուններուն:

Միւս կողմէն, անոր դրացին, շատ բարի մարդ էր. ան միշտ ուրախութեամբ կը կիսեր իր քիչ ունեցածը: Ան յաճախ աւելի կը մտածեր իր շուրջ գտնուողներուն օգնութեան հասնելու, քան դրամ շահելու եւ դիզելու մասին: Ազահ փռապանը կը նախանձեր իր դրացիին կենսուրախ վիճակին: Ան կը փնթփնթար. «Ինչպէ՞ս ան այդքան քիչ ունենալով կրնայ այսքա՛ն երջանիկ ըլլալ»:

Ամէն առաւօտ կասիայով կարկանդակներուն եւ քաղցր կրկնեփուկներուն ախորժաբեր բոյրը դուրս կու գար փուռէն, իսկ քամին այդ քաղցր բոյրը կը տաներ դէպի դրացիին տունը: Երբ խեղճ դրացին նստած կ'ըլլար իր պատշգամբը չոր հաց մը ուտելու, անուշ բոյրը ամբողջ օդը կը լեցներ: Ան խոր շունչ քաշելով, երջանկութեամբ կը հառաչէր: Իսկ փռապանը հետեւելով անոր կը մտածեր. «Իմ թխած խմորեղենին բոյրը անոր չոր հացը համեղ կը դարձնէ: Ասիկա արդար չէ: Ան պէտք է վճարէ այս հաճոյքին գինը»:


Օր մըն ալ փռապանը գնաց դրացիին տունը, դուռը թակեց եւ անոր ստացագիր մը երկարեց: Դրացին ըսաւ.

-Ի՞նչ է այս, կ'ուզես վճարե՞մ քեզի, ինչո՞ւ համար, ես այնքան դրամ չունիմ, որ փուռեղ բան մը գնեմ:

-Անիկա այդպէս է, դուն բան չես վճարեր, բայց ամէն օր հացիս բոյրը կը գողնաս,- գայրոյթով ըսաւ փռապանը:

-Այսինքն կ'ուզեք, որ ես տասը ոսկի վճարեմ, որպէս բոյրի գումար,- ծիծաղեցաւ դրացին:

-Այո՛, այսուհետեւ թոյլ չեմ տար, որ գիս խաբես, իսկ եթէ չվճարես՝ քեզ դատարան կը կանչեմ,- պատասխանեց փռապանը:



2



ՅԱՆՆԵԼՈՒԿ

Անտառին մէջ ծառ մը կ'աճի: Այս ծառը իւրաքանչիւր տարի իր հասակին կրկնապատիկը կ'ըլլայ, մինչեւ որ իր բարձրագոյն հասակին կը հասնի տասերորդ տարին: Ո՞ր տարին այս ծառը իր բարձրագոյն հասակին կիսուն կը հասնի:

Վստահութեամբ ձեր յայտարարութիւնը ներկայացուցէ՛ք ձեր լուծման ճիշտ պատասխանը: Պատասխանը ձեր լուծման ճիշտութիւնը կ'ընտելուի:

$9 + \square = 15$	$\square + 8 = 14$
$\square + 5 = 13$	$5 + \square = 13$
$8 + \square = 16$	$\square + 3 = 12$
$\square + 7 = 14$	$7 + \square = 15$
$3 + \square = 10$	$\square + 6 = 14$
$\square + 2 = 11$	$5 + \square = 16$
$9 + \square = 18$	$\square + 2 = 10$
$\square + 6 = 13$	$6 + \square = 13$
$5 + \square = 12$	$\square + 8 = 17$

Փորձէ՛ լուծել:



Երբ այս լուրը քաղաքին մեջ տարածուեցաւ, բոլորը ծիծաղեցան գողցուած բոյրի պատմութեան վրայ: Փռապանը այնքան զայրացաւ, որ հարցը հասցուց յարգուած դատաւորի մը: Բոլորն ալ վստահ էին, որ դատաւորը կարճ ձեւով պիտի վերջացներ այս սիրւոյ, որեւէ մէկը ինչպէ՛ս կրնար բոյր գողնալ: Բայց դատաւորը ըսաւ, «Իմ պարտքն է լսել փռապանին խօսքերը: Ուստի կը հրամայեմ, որ փռապանը եւ անոր դրացին վաղը առաւօտեան դատարան ներկայանան»:

Դատաւորը լուր դրկեց դրացիին, որ ան իր հետ հինգ ոսկի բերէ: Երբ բարի մարդը լսեց այս մէկը, անհանգստացաւ, որովհետեւ իր ունեցածը արդէն շատ քիչ էր, ինչպէ՛ս հինգ ոսկին ալ ամբողջովին ազահ փռապանին փոխանցէր:

Այս լուրը լսելով, փռապանը շատ ուրախացաւ: Անոր դէմքին վրայ քմծիծաղ կ'երեւեր, երբ կը մտածէր խեղճ դրացիին հինգ ոսկին իր գրպանը դնելու մասին:

Յաջորդ օրը փռապանն ու դրացին հասան դատարան: Քաղաքին մեջ լուրը լսող բոլոր քաղաքացիները այնտեղ էին, հետաքրքրուած դատաւորին կայացնելիք որոշումով:

Դատաւորը նախ լսեց փռապանին բողոքը, ապա դարձաւ դրացիին ու հարցուց.

- Ճի՞շդ է, որ դուն երկար տարիներէ ի վեր ամեն օր այս մարդուն հացին բոյրը կը վայելես:

Դրացին շուարած մնաց ու պատասխան չտուաւ:

Դատաւորը քիչ մը մտածելէ ետք, վերջապէս յայտարարեց.

- Այս մարդը բոյր գողցած է, ուստի, քանի որ գողութիւնը յանցանք է, պետք է պատժուի: Բարի մարդը բողոքեց.

-Բայց... ես...:

- Լռութի՛ւն,- գոռաց դատաւորը: Ապա դարձաւ բարի մարդուն եւ հրամայեց, որ հինգ ոսկին հանէ գրպանէն:

Բարի դրացին դատաւորին հրամանը կատարեց: Ապա դատաւորը խնդրեց իրմէ ոսկիները մէկ ձեռքէն միւս ձեռքը անցընել:

Դատաւորը դարձաւ փռապանին եւ հարցուց.

- Կը լսե՞ս ոսկիներուն զնգոցը: հաճելի է, չէ՞:

- Այո՛, շա՛տ հիանալի ձայն մըն է: Այս ձայնը այն դրամին ձայնն է, որուն կը հաւատամ, որ արդարօրէն արժանի եմ,- բացազանչեց փռապանը:

Փռապանը արագօրէն մօտեցաւ դատաւորին ոսկիները կրկին առնելու համար:

- Սպասէ՛,- ըսաւ դատաւորը,- Դուն արդէն արդար ոսկի ունիս վճարելու այս մարդուն, քու դրացիդ մեղաւոր էր, որ հացիդ բոյրը գողցած էր, իսկ դուն այժմ մեղաւոր ես, որովհետեւ անոր ոսկիներուն ձայնը քեզ գուարճացուց:

Ամբողջ դահլիճը կը ծիծաղէր դատաւորին խօսքերը լսելով: Ժողովուրդը զարմացաւ դատաւորին ուշիմութեան:

Փռապանը գլուխը կախեց եւ զգաց, թէ որքան յիմար եւ ազահ մարդ մը եղած էր:

Այդ օրուրէն դատաւորը յայտնի դարձաւ որպէս քաղաքին ամենէն իմաստուն մարդը:

Այս պատմութենէն կը հասկնանք, որ մարդոց հետ միշտ արդարութեամբ եւ ազնուութեամբ պետք է վարուիլ:



ԿԱԿՂԱՄՈՐԹՆԵՐ

Կակղամորթները անողնաշար կենդանիներ են՝ օժտուած պատեանով մը: Ունին թոյլ մարմին մը՝ կազմուած ոտքէ եւ երբեմն միայն գլուխէ մը: Ամբողջութիւնը վերածածկուած է մաշկով մը, որ գայն կը բաժնէ իր պատեանէն: Անոնք մեծամասնութեամբ ջրային են եւ կը շնչեն խռիկներով, բայց անոնց ցամաքային տեսակը կը շնչէ թոքերով (խխունջ եւ այլն...):

Կակղամորթները կը գատորոշուին երեք գլխաւոր բաժանումներով.

-Որովայնոտներ, որոնք մէկ կտորէ բաղկացած պատեան մը ունին: Ինչպէս օրինակ՝ խխունջը, խեցեմորթը, եւ այլն...:

-Երկխիփներ՝ երկու մասէ բաղկացած պատեան մը ունին: Ինչպէս օրինակ՝ ձկնականջը, կճեպը, ոստրէն եւ այլն...:

-Գլխոտներ՝ ունին ներքին պատեան մը, ինչպէս՝ մելանաձուկը, կաղամարը եւ ընգղան:

ԳԻՏԵՐՍ ԹԷ...

Երբ մելանաձուկը վտանգ մը զգայ, կ'արձակէ սեւ մելան, որ զինք կը պաշտպանէ իր թշնամիէն եւ առիթ կու տայ որ փախչի:

Կաղամարը կ'օգտագործէ իր տասը շոշափելիքները, որպէսզի որսայ այն ձուկերը, որոնք իր սնունդը կը կազմեն:

Հսկայ կաղամար մը կրնայ ունենալ 18 մէթր երկայնք եւ 500 ք.կ. ծանրութիւն: Վայրագօրէն կը պայքարի կիտաժանիներու դէմ, զանոնք իր շոշափելիքներու սանցին մէջ առնելով:

Նուրբ մարգարիտը կ'արտադրուի մարգարտաւոր ոստրէին միջոցաւ, որ չ'ուտուիր: Աւագի հատիկ մը երբ իր պատեանին մէջ կը մտնէ, պատճառ կ'ըլլայ սատափի հիւթանշատումին, որ զինք կը պատէ եւ այս ձեւով կը կազմուի մարգարիտը:

Խխունջները պարուրածէ պատեանով կակղամորթ կենդանիներ են, որոնք կ'ապրին գետնի վրայ եւ ջուրին մէջ: Դնդերաւոր ոտքի մը վրայ անոնք կը տեղափոխուին սողալով եւ կայուն եւ փայլուն լորձունք մը կը ձգեն որպէս հետք: Մեծամասնութեամբ իրենց կռնակին վրայ ունին պարուրածէ պատեան մը, որ կը ծառայէ իբրեւ թաքստոց: Անոնց ձմեռնաքունը կը սկսի աշնանամուտին եւ կը տեւէ մինչեւ գարուն: Անոնք պահ մը կը մտնեն իրենց պատեանին մէջ, որուն մուտքը կը գոցեն չորցած լորձունքով:

Ութոտանին ունի ութ շոշափելիքներ, որոնք կը ծառայեն խեչափարներ եւ խեցգետիկներ (իրենց հիմնական սնունդը) որսալու: Ան կրնայ արագօրէն տեղափոխուիլ հակառակ ուղղութեամբ, ետ մղելով ջուրը իր խողովակին օգնութեամբ:

